**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի վարչական շենքի 3-րդ հարկի հարկաբաժանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. սեպտեմբերի 29-ին կնքված N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026թ. հունվարի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը.

**Փոփոխության առաջացման պատճառ.** «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2025թ. սեպտեմբերի 29-ին կնքված N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 պայմանագրի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ավելացնել ձեռքբերվող ապրանքի քանակը, որը չի գերազանցում Պայմանագրի գնի 10%-ը:

**Փոփոխության նկարագրություն.** «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2024թ. դեկտեմբերի 29-ին կնքված N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 Պայմանագրի.

- 5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 22,977,174.00 (քսաներկու միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, որից 3,829,529.00 (երեք միլիոն ութ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր քսանինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:
- Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:
- Հավելված 1.1-ին կից՝ ավելացված աշխատանքների մասով, հաստատել աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն սույն համաձայնագրի Հավելված 2-ի:
- Հավելված 3-ով և կողմերի միջև 28.12.2025թ. կնքված համաձայնագիր 1-ի Հավելված 2-ով հաստատված վճարման ժամանակացույցերը փոփոխել և հաստատել նոր խմբագրությամբ, համաձայն սույն համաձայնագրի Հավելված 3-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետերով սահմանված պահանջներ և ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված պահանջներ:

Պատվիրատու՝ **«Երևանի ավտոբուս» ՓԲԸ**